

**ԵՐԱՆՈՒՀԻ ԹՈՒՄԱՆՅԱՆՑ**

«Իրավունքի Եվրոպա Միավորում» իրավապաշտպան  
հասարակական կազմակերպության ավագ իրավախորհրդատու,  
փաստաբան, իրավագիտության մագիստրոս

## **ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԴԵՐԸ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՔՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ**

Հոդվածում ներկայացված են Հայաստանի Հանրապետության դատական ինքնակառավարման մարմնի ստեղծման և զարգացման սահմանադրամական հիմքերը: Նկատի ունենալով, որ տվյալ մարմնի հիմնական նպատակը հանդիսանում է դատավորական համայնքի շահերի ներկայացումը և պաշտպանությունը, բացի այդ՝ դատական ինքնակառավարման մարմնը դիտարկվում է որպես դատարանների ինքնուրույնության և դատավորների անկախության երաշխավորը, իրդանում ներկայացվել է դատական ինքնակառավարման մարմնի զարգացման էվոլյուցիան՝ Հայաստանի Հանրապետությունում իրականացված սահմանադրական բարեփոխումների յուրաքանչյուր փուլում, ինչպես նաև կատարված փոփոխություններին տրվել է գնահատական՝ դատական իշխանության ինքնուրույնության և անկախության զարգացման համատեքսում: Իրականացված բարեփոխումների գնահատականը տրվել է միջազգային փաստարդերի և միջազգային կազմակերպությունների կողմից տրված առաջարկությունների հիմնա վրա: Համապարփակ վերլուծության հիմնա վրա ներկայացվել են գործնական առաջարկություններ՝ դատական ինքնակառավարման մարմնի վերաբերյալ օրենսդրության հետագա կատարելագործման ուղղությամբ, ինչը կնպաստի դատական իշխանության ամրապնդմանը և հիմք կհանդիսանա դատական իշխանության ինքնուրույնության զարգացման համար:

**Հիմնարարեր- Սահմանադրություն, սահմանադրական բարեփոխում, դատարան, դատական իշխանություն, դատական ինքնակառավարման մարմին:**

20-րդ դարի երկրորդ կեսին շատ երկրներում արդարադատության նախարարությունները կորցրեցին իրենց երեսների դերը արդարադատության կառավարման ոլորտում: Բացահայտուեն ձևավորվում էին միտումներ՝ նշված գործառությը դատական ինքնակառավարման հատուկ մարմններին հաճանելու ուղղությամբ, որոնք սկսեցին ամրագրվել նոր սերնդի սահմանադրություններում [Կուլիչ, 2010թ.]: Նշված մարմնների իրավասությունների ուսումնասիրմամբ կարելի է փաստել, որ նրանց ընդհանրական նպատակը «դատավորական հանրույթի շահերի ներկայացումն ու պաշտպանությունն է կադրային հարցերի լուծման կամ դրանց մասնակցության առումով» [Բուրդինա, 2005թ.]: Դա է պատճառը, որ գործնականում բոլոր խորհրդների իրավասությունների տիրույթում են դատավորների նշանակման, կարգապահական պատասխանատվության ենթարկելու, նրանց գործունեությունը դադարեցնելու, դատավորների տեղափոխման և արդարադատության իրականացմանն առնչվող մի շարք այլ հարցեր [Թումանովա, 1991թ., Ստրաշուն, 2000թ.]:

Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների առաջին փուլում ստեղծվեց Արդարադատության խորհուրդ, որը, հաշվի առնելով ժողովրդավարական այլ երկրների փորձը, նպատակ էր հետապնդում լուծելու վերոնշ-

յալ հարցերը: Սակայն այս շրջանում թույլ տրվեցին մի շարք թերություններ և բացքողումներ: Այսպես, Արդարադատության խորհրդի կազմում ընդգրկվեցին ՀՀ դատախազության ներկայացուցիչներ, մասնավորապես, ՀՀ գլխավոր դատախազը, ով հանդես էր գալիս որպես Արդարադատության խորհրդի փոխնախազական և վերջինիս առաջարկմամբ Արդարադատության խորհրդի կազմում ընդգրկվում էին ևս երեք դատախազներ: Սա բավականին խնդրահարույց էր, քանի որ 1995 թվականի հուլիսի 5-ի համրաքեռվ ընդունված ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածով Դատախազությունը օժտված էր պետական գործունեության ինքնուրույն տեսակով, որը որևէ կապ չուներ արդարադատության իրավասությունների հետ: Մինչդեռ, Դատախազության ներկայացուցիչները կարող էին ճնշումներ գործադրել դատավորների վրա: Բացի այդ, Արդարադատության խորհրդի կազմավորմանը մասնակից չդարձվեց օրենսդիր մարմնը՝ ՀՀ Ազգային ժողովը, իսկ դատական մարմնների անկախության երաշխավոր հոչակվեց Հանրապետության Նախագահը, ով և գլխավորեց Արդարադատության խորհուրդը: Այս պարագայում, բնականաբար, շատ դժվար էր պահպանել իշխանությունների տարանջատման և հավասարակշռման սկզբունքը, քանի որ իշխանության մի ճյուղը՝ օրենսդիրը, գերծ պահպեց դատական իշխանու-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյան ձևավորման և նրա աշխատանքներում մասնակցություն ունենալու, ինչպես նաև իշխանության գործադիր թևին Արդարադատության խորհրդում հակալշույու հնարավորությունից, այն դեպքում, որ գործադիր իշխանության ներկայացուցիչ հանդիսացող արդարադատության նախարարը Արդարադատության խորհրդի փոխնախագահն էր: Ինչ վերաբերում է Արդարադատության խորհրդը Հանրապետության Նախագահի կողմից գլխավորելուն և վերջինիս որպես դատարանների անկախության երաշխավոր հոչակելուն, ապա դա նույնապես իրավաչափ չի կարող դիտարկվել՝ հաշվի առնելով, որ սահմանադրական իր լիազորություններին համապատասխան՝ Նախագահը գործադիր իշխանության դեկավարն էր (ի տարբերություն այլ երկրների նախագահների, նա իրավիրում և վարում էր կառավարության նիստերը, վավերացնում կառավարության որոշումները և այլն) և փաստացի դատական իշխանությունն ամբողջությամբ կենտրոնանում էր նրա ձեռքում, հատկապես, որ իր կողմից գլխավորած Արդարադատության խորհրդի առաջադրմամբ էր վերջինս նշանակում բոլոր ատյանների դատավորներին: Իշխանությունների տարածաշատման սկզբունքի տեսակետից ակնհայտ է նաև, որ Հանրապետության Նախագահը չէր կարող լիներ դատարանների անկախության երաշխավորը:

Անկախ դատական իշխանության կայացման առումով էական նշանակություն ունեցան 2005 թվականի սահմանադրական բարեփոխումները, որոնցով մի շարք էական փոփոխություններ կատարվեցին նաև Սահմանադրության «Դատական իշխանություն» գլխում: Նշված բարեփոխումները կյանքի կոչելու նպատակով ընդունվեցին մի շարք օրենքներ: 2005 թվականի սահմանադրական բարեփոխումներն անդրադարձան նաև Արդարադատության խորհրդի ձևավորման և գործունեության կարգին, կարգավորվեցին դատական մարմինների կադրային քաղաքականության հարցերը, դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերը և այլն: Մասնավորապես, նախկինում Հանրապետության Նախագահի փոխարքեն, ով նաև գլխավորում էր խորհուրդը, դատարանների անկախության երաշխավոր հոչակվեց Սահմանադրությունն ու օրենքը: Սահմանադրությունը լրացվեց 94.1 նոր հոդվածով, որով սահմանվեց, որ Արդարադատության խորհրդը ձևավորվում և գործում է Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով: Արմատականորեն փոփոխվեց և սահմանվեց Արդարադատության խորհրդի այլ կազմ: Փոփոխությունների արդյունքում սահմանվեց, որ Արդարադատության

խորհրդի կազմի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության դատավորների ընդիանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ հինգ տարի ժամկետով օրենքով սահմանված կարգով ընտրված ինը դատավորներ, Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրավաբան-գիտնականներ: Ամրագրեց նաև, որ Արդարադատության խորհրդի նիստերը վարում է վճռաբեկ դատարանի նախագահը՝ առանց քվեարկության իրավունքի: 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքենով կատարված փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 95-րդ հոդվածով սպառիչ կերպով սահմանվեցին Արդարադատության խորհրդի լիազորությունները, իսկ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 3-րդ բաժնում (հոդվածներ 97-171-րդ) ամբողջությամբ ներառվեցին Արդարադատության խորհրդի կազմավորմանն ու գործունեությանը վերաբերող դրույթներ: Մանրակրկիտ կանոնակարգման ենթարկվեցին խորհրդի բոլոր գործառույթների իրականացման մեխանիզմները, որոնք իրականացված դատարակական բարեփոխումների մեծագույն նվաճումն էին:

Այնուամենայնիվ, պրակտիկ գործունեության ընթացքում փաստվեց, որ այդուհանդերձ առկա են որոշ իմնախնդիրներ, որոնցով էլ պայմանավորված էր բարեփոխումների նոր փուլը: Այսպես, ՀՀ Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ուղղմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ ՆԿ-96-Ս կարգադրությամբ մասնավորապես նշվեց, որ սահմանադրական բարեփոխումներից հետո իշխանությունների բաժանման և դատական իշխանության անկախության հիմնարար սկզբունքներին համապատասխան անհրաժեշտ էր արդիականացնել դատարանների գործունեությունը և դատավորների կարգավիճակի հիմնարար հարցերը կանոնակարգող օրենսդրությունը, ապահովել Արդարադատության խորհրդի անկախությունը գործադիր իշխանությունից այն հաշվով, որպեսզի վերջինս ի զորու լինի երաշխավորել դատական իշխանության իմքնուրույնությունը:

Անժիստելի են 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքենով կատարված ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նշանակությունն ու կարևորությունը դատական իշխանության ինքնուրույնության ամրապնդման համար: Այսպես, Բարձրագույն դատական խորհուրդը (ներկայիս Արդարադատության խորհրդի իրավահաջորդը), որպես անկախ պետական մարմին, հոչակվեց դատարաննե-

րի և դատավորների անկախության երաշխավորը: Այս կապակցությամբ պետք է նշել, որ Վենետիկի հանձնաժողովը որպես Դատական բարձրագույն խորհրդի գոյության հիմնական նպատակ համարում է դատավորների անկախության պաշտպանությունը իշխանության այլ ճյուղերի անհարկի ճնշումներից՝ դատավորների ընտրության և նշանակումների, ինչպես նաև՝ կարգապահական պատասխանատվության հարցերում: 2015 թվականի սահմանադրական բարեփոխումների մեջ այլ կարևոր քայլ էր նաև Բարձրագույն դատական խորհրդում դատավոր անդամների և իրավաբանգիտնական անդամների միջև հավասարակշռության ապահովումը և նրանց նշանակումը Ազգային ժողովի կողմից: Այս կապակցությամբ Վենետիկի հանձնաժողովը նշել էր, որ Արդարադատության խորհրդի ժողովրդավարական, իրավական բնույթն ապահովելու համար այլ անդամները պետք է ընտրվեն խորհրդարանի կողմից համապատասխան իրավաբանական որակավորում ունեցող անձանց թվից՝ հաշվի առնելով շահերի հնարավոր բախումները: Ընդ որում, դատական իշխանությունը ներկայացնող անդամների ճնշող գերակայությունը հիշյալ մարմնում կարող է առաջացնել մտահոգություններ «կորպորատիվ կառավարման» վտանգի առաջացման տեսանկյունից: 2015 թվականի սահմանադրական բարեփոխումների կարևոր քայլ էր նաև Բարձրագույն դատական խորհրդի կողմից իր, ինչպես նաև դատարանների ծախսերի նախահաշիվների հաստատման և Կառուվարություն՝ օրենքով սահմանված կարգով պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար ներկայացման լիազորության ամրագրումը:

Բնականաբար, խոսելով Բարձրագույն դատական խորհրդի մասին՝ պետք է անդրադառնալ խորհրդի լիազորությունների հարցին և մասնավորապես, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցին, քանի որ դատական իշխանության ինքնուրույնության և անկախության ապահովումը պայմանավորված է նաև այդ լիազորությունների ճիշտ գործադրմամբ: Այս առումով հատկանշական է արդարադատության նախարարի կարգապահական վարույթ հարուցելու իրավունքի պահպանումը, հատկապես, որ արդարադատության նախարարը ոչ արդարադատության, ոչ էլ դատավորների ընթացիկ գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող չի համարվում, այնուամենայնիվ, Դատական օրենսգիրի 156-րդ հոդվածի 2-րդ մասի կանոնակարգման համաձայն՝ կարգապահական վարույթ հարուցող անձը (տվյալ պարագայում արդարադատության նախարարը) իրավունք է ստանում դա-

տարանից պահանջելու և ուսումնասիրելու օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով քրեական, քաղաքացիական կամ ցանկացած այլ գործի նյութ, դատավորից պահանջելու գրավոր բացատրություններ և այլն: Բնականաբար, սա բավականին մեծ հնարավորություն է դատաքննության ընթացքում գտնվող գործերով դատավորի նկատմամբ ոչ իրավաչափ միջամտության: Ըստ որում, հատկանշական է, որ Դատական օրենսգրքով որևէ սահմանափակում չկա դրսփակ դատական նիստերի նյութերի ծանոթացման հետ, ինչը բավականին խնդրահարույց է դատավարության մասնակիցների օրինական շահերի տեսակետից:

Այսպիսով, նշվածը բավականին մեծ հնարավորություն է գործադիր իշխանության ներկայացնուցին՝ միջամտելու դատարանների գործունեությանը: Նշվածը հաշվի առնելով՝ կարծում ենք, անհրաժեշտ է օրենսդրության բացառել արդարադատության նախարարի կողմից կարգապահական վարույթ հարուցելու իրավունքը: Միաժամանակ, օրենսդրական փոփոխությունների միջոցով կարծում ենք՝ անհրաժեշտ է բացառել անգամ կարգապահական հանձնաժողովին որևէ կերպ միջամտելու դատավորի գործունեությանը վարույթում գտնվող գործերով: Այլ կերպ ասած, արգելել դատավորի վարույթում գտնվող գործերով որևէ նյութ պահանջելու կամ դատավորից որևէ բացատրություն պահանջելը: Մտահոգիչ է, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք»-ը Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագծով պահպանել է արդարադատության նախարարի՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավունքը և սահմանել, որ, եթե դատավորի նկատմամբ կարգապահական վարույթը հարուցել է արդարադատության նախարարը, ապա վերջինս պարտավոր է ներկա գտնվել Բարձրագույն դատական խորհրդի նիստին: Այս կապակցությամբ հարկ ենք համարում անդրադառնալ Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշմանը, ըստ որի՝ արդարադատության նախարարի ներկայությունը դատական խորհրդությունը բավականին տարածված է պրակտիկայում, սակայն, վերջինիս մասնակցությունը մտահոգիչ է դատավորների կարգապահական վարույթին: Այդպիսի դեպքերի համար Վենետիկի հանձնաժողովը առաջարկում է, որ Արդարադատության նախարարը չմասնակցի այդ հարցերի վերաբերյալ որոշումներին, որպեսզի բացառվի կառավարության կողմից անցանկալի միջամտությունը: Նույնը փաստում է նաև միջազգային փորձը: Այսպես օրինակ, Ֆրանսիայի Արդարադատության նախարարն իրավունք չունի մասնակցելու Սագիստրատուրայի

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

բարձրագույն խորհրդի (Conseil Supérieur de la Magistrature) նիստերին (Մագիստրատուրայի բարձրագույն խորհուրդը հանդիսանում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկող մարմին):

Այս կապակցությամբ հարկ ենք համարում անդրադառնալ ԵԽ մարդու իրավունքների հանճարակատարի կողմից 2015 թվականի մարտին իրապարակված գեկույցին, որի «Եզրակացություններ և հանձնարարականներ» բաժնում նշվել է, որ հարկ է վերանայել դատավորների նկատմամբ իրականացվող կարգապահական վարույթներում արդարադատության նախարարության դերակատարությունը: Ավելին, Եվրոպայի խորհրդի փորձագետները և մի շարք հասարակական կազմակերպություններ, կարծիք են հայտնել, որ արդարադատության նախարարի մասնակցությունը դատավորների նկատմամբ իրականացվող կարգապահական վարույթներին համատեղելի չէ դատական իշխանության անկախության սկզբունքի հետ, և անհրաժեշտ է պատշաճ միջոցներ ձեռնարկել դատավորների նկատմամբ կարգապահական տույժեր նշանակելու հարցում Արդարադատության նախարարի բոլոր լիազորությունները վերացնելու ուղղությամբ:

2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով կատարված ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 175-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել է, որ դատավորին կարգապահական պատասխանատվություն ենթարկելու վերաբերյալ հարցը քննարկելու ընթացքում Բարձրագույն դատական խորհրդը հանդես է գալիս որպես դատարան: Նման դրույթ առկա է նաև ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածում, ըստ որի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը քննելիս արդարադատության խորհրդում գործում է որպես դատարան: Ընդ որում, որպես դատարան գործելիս արդարադատության խորհրդում գործունեության կարգի նկատմամբ կիրառվում են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նորմերն այնքանով, որքանով դրանք իրենց եռթյամբ կիրառելի են արդարադատության խորհրդում գործի քննության նկատմամբ և չեն հակասում դատական օրենսգրքի նորմերին: Միանշանակ արձանագրելով կարգապահական վարույթի կատարելագործմանն ուղղված դատական օրենսգրքի կամոնակարգումները՝ հարկ է փաստել, որ վարույթի ամրող ընթացակարգը առավել ճիշտ է սահմանել իրենց դատական օրենսգրքով, որպեսզի գոնի հստակեցվի «իրենց եռթյամբ կիրառելի» եզրույթը: Ավելին, անհրաժեշտ է ուղղակի նախատեսել կանոն, առ այն, որ արդարադատու-

թյան խորհրդի բոլոր որոշումները ոչ միայն պետք է լինեն պատճառաբանված, այլև դրանցով պետք է պատճառաբանվեն վարույթին դատավորի ներկայացված հանգանակներից յուրաքանչյուրը: Հարկ է նշել, որ Եվրոպական Դատավորների խորհրդատվական խորհրդի կողմից 2007 թվականի նոյեմբերի 23-ին ներկայացված թիվ 10 կարծիքի համաձայն՝ Դատական խորհրդի այն որոշումները, որոնք առնչվում են դատական համակարգի կառավարմանը և վարչարարությանը, ինչպես նաև դատավորների նշանակման, տեղափոխման, կարգապահության և հեռացման հետ կապված որոշումները պետք է լինեն պատճառաբանված, ունենան պարտադիր ուժ: Ողունելի է, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք»-ը Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագծով սահմանել է, որ կարգապահական խախտման մասին եզրակացությունը բաղկացած է ներածական, նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասերից: Ընդ որում, Նախագծով վերացվել է հղումը վարչական դատավարության օրենսգրքին: Այնուամենայնիվ, կարևորելով իրապարականության սկզբունքը, հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք»-ը Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի կարգավորումները, գտնում ենք, որ մանրամասն կանոնակարգման է ենթակա դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործով Բարձրագույթ դատական խորհրդի նիստերը դրնիվակ անցկացնելու ընթացակարգը: Մինչ 2014 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացնումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-86-Ն ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը Արդարադատության խորհրդի նիստերը դրնիվակ էին, (բացառությամբ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործերի քննության այն դեպքերի, եթե դատավորը, որի նկատմամբ կարգապահական վարույթը է հարուցվել, պահանջում է իր գործի իրապարակային քննություն): Վերոնշյալ փոփոխությունների արդյունքում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերով նիստերը պետք է անցկացվեին դրնբաց, բացառությամբ այն դեպքերի, եթե դրանք Արդարադատության խորհրդի որոշմամբ անցկացվում են դրնիվակ՝ հանրության բարձրերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով: Նշված ձևակերպումները բավականին ընդհանուր են, ինչն

Էլ հիմք հանդիսացավ այն հանգամանքի համար, որ անգամ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերով Արդարադատության խորհրդում դռնքաց նիստեր տեղի չեն ունեցել, ինչը հիմնավորվել է համապատասխան դատավորների կողմից ներկայացված միջնորդություններով: «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրը»-ը Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագծով ձևակերպումներն նույնպես ընդհանուրական են: Այսպես, Նախագծի 146-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործով Բարձրագույն դատական խորհրդի դրոշմամբ անցկացվում է նաև դրանքի որոշմամբ անցկացվում են դրնվակ՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով, օրենքով պահպանվող այլ տեղեկությունների պահպանության համար: Կարծում ենք, անհրաժեշտ է հստակեցնել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործով Բարձրագույն դատական խորհրդի նիստերը դրնվակ անցկացնելու դեպքերը:

Եզրահանգելով՝ կարող ենք փաստել, որ

1. նկատի ունենալով, որ դատավորի վարքագիծը և կարգապահական պատասխանավությունը դատական իշխանության արդյունավետ գործունեության կարևորագույն հայեցակետերից են՝ անհրաժեշտ է օրենսդրության բացառել արդարադատության նախարարի կողմից կարգապահական վարույթ հարուցելու իրավունքը, քանի որ նման կարգավորման պայմաններում անհամաշափ ուժեղ դասում են դատական իշխանության վրա գործադրի իշխանության ներգործելու հնարավորությունները և արդյունքում սահմանափակվում դատական իշխանության ինքնուրույնությունը:

2. Իրավական որոշակիության սկզբունքի ավահովման նպատակով անհրաժեշտ է մանրամասն կանոնակարգել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործով Բարձրագույն դատական խորհրդի նիստերը դրնվակ անցկացնելու ընթացակարգը (հստակեցնել դրնվակ անցկացման դեպքերը, նախատեսել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործով Բարձրագույն դատական խորհրդի նիստերը դրնվակ անցկացնելու մասին) թիվ ՆԿ-96-Ա կարգադրությամբ ՀՀՊՍ 2012.07.11/33(907) Հոդ.827:

#### **ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿՄԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններ: Ընդունվել է 1995 թ. հունիսի 5-ին՝ հանրաքենով, փոփոխությունները՝ 2015 թ. դեկտեմբերի 6-ին՝ հանրաքենով: ՀՀՊՍ 2015.12.21/Հասուկ բողարկում հոդ. 1118:
2. Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրը (2007 թ. փետրվարի 21-ի ՀՕ-135-Ն):
3. ՀՀ Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի և ծրագրի բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ ՆԿ-96-Ա կարգադրությամբ ՀՀՊՍ 2012.07.11/33(907) Հոդ.827:
4. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրը» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագիծ, <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=46917>:
5. «Արդարադատության իրականացումը Հայաստանի Հանրապետությունում», Քաղաքացիական հասարակության ինստիտուտ, Նորվեգիայի Հելսինկյան կոմիտե, ՖԻԴՀ, դեկտեմբեր, 2012թ., էջ 13, [https://www.fidh.org/IMG/pdf/administration\\_of\\_justice\\_in\\_armenia.pdf](https://www.fidh.org/IMG/pdf/administration_of_justice_in_armenia.pdf):
6. Դատական հանձնարարության անկախության հարցերով աշխատանքային խմբի գեկույցը, Եվրոպայի խորհրդի Սարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինություն, մարտ, 2013թ., էջեր 98-101:
7. Եվրոպական Միության Եվրոպական Դատավորների Խորհրդաստվական Խորհրդի 2007 նոյեմբերի 23 ներկայացված թիվ 10 կազմիք [https://www.coe.int/t/dghl/monitoring/greco/evaluations/round4/CCJE-opinion-10-2007\\_EN.pdf](https://www.coe.int/t/dghl/monitoring/greco/evaluations/round4/CCJE-opinion-10-2007_EN.pdf):
8. Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարի գեկույցը, մարտ, 2015 թվական <https://wcd.coe.int/com.intranet.InstraServlet?command=com.intranet.CmdBlobGet&IntranetImage=2701645&SecMode=1&DocId=2243332&Usage=2>:
9. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի «Արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ» արտահերթ գեկույց, Երևան, 2013թ., էջեր 13-52:
10. Бурдина Е.В. Судейское сообщество в Российской Федерации: становление и основные направления совершенствования.

## ԱՐԴԻՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Саранск: Изд. Мордовского университета. 2005, С. 202:

11. Кудевич Е.А. Органы судейского сообщества как механизм обеспечения независимости судебной власти, мировой опыт/Закон.2010. N2, С. 37-41;
12. Странун Б.А. Конституционное (государственное) право зарубежных стран. Издательство БЕК, 2000, С. 16-17.
13. Судебные системы западных государств. Под. ред. Тумановой В.А. М., 1991, С. 161-162.
14. Содействие правовой реформе в странах Восточного партнерства, Рабочая группа «Независимые судебные системы», Доклад Органы судейского самоуправления. Карьера судей, Страсбург, Сентябрь 2011г., [http://www.coe.int/t/dghl/cooperation/capacitybuilding/source/judic\\_reform/Independant\\_Judicial\\_Systems\\_rus.pdf](http://www.coe.int/t/dghl/cooperation/capacitybuilding/source/judic_reform/Independant_Judicial_Systems_rus.pdf)
15. CDL-INF(1999)005, Venice Commission, Opinion on the Reform of the Judiciary in Bulgaria, parag. 28, [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-INF\(1999\)005-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-INF(1999)005-e):
16. CDL-AD(2007)028, JUDICIAL APPOINTMENTS // Report adopted by the Venice Commission at its 70th Plenary Session (Venice, 16-17 March 2007), 29-30, [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2007\)028-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2007)028-e):
17. CDL(2012)084-rus, Стандарты Венецианской комиссии по независимости судебной системы. П. IV [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL\(2012\)084-rus](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL(2012)084-rus):

Երանու Տումանյանց

Старший юрист консультант  
правозащитной общественной организации  
«Ассоциация Европа в праве»,  
адвокат, магистр права

### РЕЗЮМЕ

#### *Роль совета правосудия в обеспечении самостоятельности судебной власти*

В статье рассмотрены конституционно-правовые основы создания и развития органа судейского самоуправления Республики Армения. Учитывая, что основной задачей данного рода органов является представительство и защита интересов судебного сообщества при решении вопросов кадрового характера, кроме того, судейское самоуправление признается в качестве гаранта обеспечения самостоятельности судов и независимости судей, в статье рассмотрена эволюция развития этого органа судебного сообщества на каждой стадии осуществленных конституционных реформ в Республике Армения и дана оценка осуществляемым изменениям в контексте становления и развития самостоятельности и независимости судебной власти. Оценка осуществляется на основе международных документов и рекомендаций международных организаций. На основании всестороннего анализа предлагаются практические рекомендации по направлению дальнейшего совершенствования законодательства касательно органа судейского самоуправления, которое укрепит позиции судейского сообщества и станет основанием для развития самостоятельности судебной власти.

**Ключевые слова:** Конституция, конституционная реформа, суд, судебная власть, орган судейского самоуправления.

Yeranuhi Tumanyants

Senior Legal Advisor of «Europe in Law  
Association» non-governmental organization,  
Advocate, Master of Laws

### SUMMARY

#### *Role of council of justice in ensuring self-dependence of judicial authority*

The annotation: In article constitutional and legal basics of creation and development of body of judicial self-government of the Republic of Armenia are covered. Considering that the main objective of this sort of bodies is the representation and protection of interests of judicial community at the solution of questions of personnel character, besides, judicial self-government admits quality of the guarantor of ensuring self-dependence of courts and judges, in article evolution of development of this body of judicial community at each stage of the carried-out constitutional reforms in the Republic of Armenia is considered and an assessment is given to the carried-out changes in a context of formation and development of self-dependant judicial authority. An assessment is given to the carried-out reforms based on the international documents and the recommendations of the international organizations. On the basis of the comprehensive analysis practical recommendations about the direction of further improvement of the legislation concerning body of judicial self-government which will strengthen positions of judicial community and will become the basis for development of self-dependant judicial authority are offered.

**Key words:** Constitution, constitutional reform, court, judicial authority, body of judicial self-government.